ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 80
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29-ը մարտի 2025թ.

Նիստը անցկացվել է հարցման միջոցով, որին մասնակցել են գիտական խորհրդի 34 անդամներից 27-ը:

Օրակարգում եղել են հետևյալ հարցերը.

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար՝ Մ.Ս. Աթոյան)
2. ԵՊՀ ԻՄ-ում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգում փոփոխություններ կատարելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար՝ Մ.Ս. Աթոյան)

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին» հարցի վերաբերյալ նյութը ներկայացրել է գիտական քարտուղար Մ. Աթոյանը(տես հավելված 1):

Հարցի վերաբերյալ առաջարկներ չեն եղել:
Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ 80/1

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգում փոփոխություններ կատարելու մասին» հարցի վերաբերյալ նյութը ներկայացրել է գիտական քարտուղար Մ. Աթոյանը.

Առաջարկվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/7 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և

անցկացման կարգի 3-րդ մասի (ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ) 21.-րդ կետում՝ (Մրցույթին մասնակցելու համար դասախոսները Հանձնաժողովին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը) ավելացնել 11-րդ ենթակետ. «11. ընթացիկ ուսումնական տարում իրականացրած առնվազն երկու ակնարկային/թեմատիկ դասախոսությունների վերաբերյալ տեղեկանք Ուսումնամեթոդական վարչության կողմից:»

Հարցի վերաբերյալ առաջարկներ չեն եղել:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 1 դեմ, 2 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ 80/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի **2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/7 որոշմամբ** հաստատված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի 3-րդ մասի (**ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**) 21.-րդ կետում՝ (Մրցույթին մասնակցելու համար դասախոսները Հանձնաժողովին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը) ավելացնել 11-րդ ենթակետ. ***«11.ընթացիկ ուսումնական տարում իրականացրած առնվազն երկու ակնարկային/թեմատիկ դասախոսությունների վերաբերյալ տեղեկանք Ուսումնամեթոդական վարչության կողմից:»***
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման և հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ